**Արձանագրություն N 3**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված « ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-01 » ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «25» հունվարի 2016թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Խորեն Պետրոսյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Տիգրան Ստեփանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության մասնագետ:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1.Տեղեկություններ՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու մասին**

1.1 «Յուքոմ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Վերջիններս համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հաշվի առնելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման <Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի /այսուհետ՝ Կարգ/ 48-րդ կետով սահմանված ՀՀ ֆինանսների նախարարության եզրակացությունը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

2.1. 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Յուքոմ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է).
- գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, իրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:
- <<ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագիրը կնքվելու կամ ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ դրան հաջորդող աշխատանքային օրը), ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ______________ Կարեն Մելքոնյան

Անդամներ՝ ______________ Կարեն Համբարձումյան

______________ Արթուր Թամրազյան

______________ Խորեն Պետրոսյան

______________ Տիգրան Ստեփանյան

Քարտուղար՝ ______________ Մարիամ Հայրապետյան